

Ծամ իս թորկե Tsam is t'orke

- | | |
|---|--|
| 1. Ծամ իս թորկե էրան-էրան,
Խորոտիկ, հայ, խորոտիկ,
Բոլոր էրես, պզտիկ բերան/
Խորոտիկ, ջան, խորոտիկ:/2 | 1. Tsam is t'orke eran-eran,
Khorotik hay, khorotik,
Bolor eres, pəztik beran/
Khorotik, jan, khorotik./2 |
| 2. Դու կայներ իս դարգահի դուռ,
Խորոտիկ, հայ խորոտիկ,
Մեջքդի մընի խանջարի բուռ/
Խորոտիկ, ջան, խորոտիկ:/2 | 2. Du kayner is dargahi durr,
Khorotik, hay khorotik,
Mejk'di məni khanjaru burr/
Khorotik, jan, khorotik./2 |
| 3. Դու էլեր իս հալա-հուլա,
Խորոտիկ, հայ, խորոտիկ,
Քու տոտիկներ ամպի քուլա, /
Խորոտիկ, ջան, խորոտիկ:/2 | 3. Du eler is hala-hula,
Khorotik, hay, khorotik,
K'u totikner ampi k'ula, /
Khorotik, jan, khorotik./2 |
| 4. Դու անուշ իս քանց մանուշակ,
Խորոտիկ, հայ, խորոտիկ,
Իգամ ձեր տուն, դառնամ մշակ,
Խորոտիկ, ջան, խորոտիկ:/2 | 4. Du anush is k'ants' manushak,
Khorotik, hay, khorotik,
Igam dzer tun, darrnam məshak,
Khorotik, jan, khorotik./2 |
| 5. Աշուն եկավ, հելա գացի,
Խորոտիկ, հայ, խորոտիկ,
Խորոտ տուն չէր, նստա լացի,
Խորոտիկ, ջան, խորոտիկ:/2 | 5. Ashun ekav, hela gats'i,
Khorotik, hay, khorotik,
Khorot tun ch'er, nəsta lats'i,
Khorotik, jan, khorotik./2 |